Բագրատունիների և ափխազաց թագավորությունների միջև մղվող անզիջում պայքարի ժամանակաշրջանում պահպանել իր քաղաքական ինքնուրույնությունը։

Կրտսեր գիտաշխատող Ն. Արզումանյանը զեկուցում կարդաց հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ հիշատակվող պարսկական «Մատյան գնդի» մասին։ Ժխտելով «Մատյան» բառի նախկին բացատրությունները, նա գտնում է, որ «մատյան» բառը «մատյան գունդ» արտահայտության մեջ ծագում է միջին պարսկերենի «մաթաք» բառից, որը նշանակում է էգ ձի, մատակ և ոչ թե՝ «մաթեգան» կամ «մաթիքան» բառից, որը նշանակում է մատյան, ժողովածու

«Պարթևական կայաններ» կամ «Մղոնաչափք» անուններով հայտնի Իսիդոր Խարակացու աշխատանքն իրենից ներկայացնում է պարթևյան շրջանի Իրանի զգալի մասի պատմա-աշխարհագրական նկարագրությունը։ Այդ աշխատանքի մասին զեկուցեց ասպիրանտ Է. Դանիելյանը։ Աշխատանքի ժամանակագրության ու հեղինակի հետ առնչվող հարցերը քննարկելիս նա վերլուծեց ճանապարհների, նրանց տնտեսական նշանակության և առանձին սատրապությունների մասին Խարակացու հաղորդած տեղեկությունները։ «Մղոնաչափք»-ի հունարենից կատարված սեփական թարգմանությունը հնարավորություն էր տվել զեկուցողին ավելի մոտիկից ծանոթանալու Խարակացու գործին, որի արդյունքն էր իր իսկ կողմից «Մղոնաչափքի» տվյալներով կազմած քարտեզը։

Հայ ժողովրդի պատմության մեջ Երվանդունիների ծագման առեղծվածային հարցին էր նվիրված կրտսեր գիտաշխատող Ժ. Էլչիբեկյանի զեկուցումը։

Զեկուցումների շուրջ ելույթ ունեցան Ս. Երեմյանը, Ա. Հակոբյանը, Ա. Համբարյանը, Գ. Տիրացյանը, Բ. Ուլուբաբյանը, Ե. Խալեյանը, Ս. Կրկյաշարյանը։ Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Վ. Բարխուդարյանը։

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

## «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»

*Հարություն Սուրխաթյանը 1908 թ. մինչև մահը (1938 թ.) ծավալել է բեղմնավոր գրականագիտական գործունեություն, որը առ այսօր հանգամանորեն չի ուսումնասիրվել։*

*Վերջերս Երևանի Համալսարանի Հրատարակչությունը լույս ընծայեց Հ. Սուրխաթյանի «Գրականության հարցեր» խորագրով հոդվածների ժողովածուն, ուր ամփոփված է նրա գրական ժառանգության զգալի մասը, որը պատկերացում է տալիս հեղինակի 30-ամյա գրական-քննադատական գործունեության մասին։*

*Ընդգծելով, որ ինքը մարքսիստական աշխարհայացքի կողմնակից է և կիրառում է «այսպես ասած գեղարվեստական-սոցիոլոգիական մեթոդը» («Գրականության հարցեր», էջ 73), Հ. Սուրխաթյանը վեր է լուծում արվեստի ու գրականության՝ հասարակական կյանքի հետ ունեցած կապը, խոսում գեղարվեստական արժեքները նոր աշխարհայացքի լույսով ու մեթոդով վերագնահատելու մասին։*

*Հ. Սուրխաթյանի գրականագիտական, քննադատական գործունեությունը բնութագրվում է առաջին հերթին մի հիմնական սկզբունքով՝ ուշադիր, լրջմիտ վերաբերմունքը անցյալի արժեքների նկատմամբ զուգակցել նոր արվեստը զարգացնելու խնդիրներին։ Այն ժամանակ, երբ ոմանց թվում էր, թե «անցել է Րաֆֆիների, Ծամառ-Քաթիպաների և, եթե կուզեք, Թումանյանների գրական շրջանը» («Մարտակոչ», 19. 10. 1924) և նրանք ոչինչ չունեն անելու նոր հասարակարգում. Սուրխաթյանն իր ձեռնարկներում, որոնք կոչված էին նպաստելու նոր սերնդի կրթության և դաստիարակության գործին, կարևոր տեղ էր հատկացնում նրանց։ «Հովհաննես Թումանյանի տեղը մեր գրականության մեջ» հոդվածում գրականագետն ընդգծում է, որ բանաստեղծը «կանգնած է հայ նորագույն գրականության զարգացման գլխավոր ճանապարհի վրա, գտնվում է նրա գլխավոր հունի գլխին» (էջ 76)։*

*Նոր գրականություն ստեղծելու համար պայքարում Սուրխաթյանը կարևոր է համարում բնորոշել ֆուտուրիզմի էությունը, հաստատել, որ այն չէ հեղափոխության արտահայտությունը գրականության մեջ։ Նա վեր է լուծում «Երեքի» դեկլարացիան, ցույց տալիս, որ այն բնութագրող «երկու կետն» էլ՝ հին արժեքների ժխտումը և սեփական ուժերի գերագնահատությունը, գալիս են ֆուտուրիզմից։*

*Նոր գրականություն ստեղծելու սկզբունքների ու նրա զարգացման ուղիները որոշելու հետ առնչված խնդիրները զալիս-հանգուցվում էին հիմնականում Չարենցի ստեղծագործության հետ։*

Բնորոշելով մինչչարենցյան հայ պոեզիայի զարգացման վերջին օղակը՝ Տերյանի ստեղծագործությունը, նրա հեղափոխական ուղին, նրա որոնումները և հայտնությունները, նա հաստատում է, որ Չարենցը հայ գրականության պատմության մի նոր փուլը, նոր օղակն է կազմում, Տերյանից հետո։ Դա սոցիալիստական հեղափոխության երգչի օղակն է։ Հ. Սուրխաթյանը գրականության զարգացման նոր փուլը չի կտրում գրական ընդհանուր պրոցեսից, դրսից չի փաթաթում գրականության պատմությանը, այն քննում է որպես գրականության զարգացման նախորդ աստիճանների օրինաչափ շարունակություն, ամենևին էլ չանտեսելով նկատելի նոր որակը։

Ե. Չարենցի, ինչպես ընդունված է ասել, սայթաքումներն էլ Հ. Սուրխաթյանին երբեք չեն շեղում նրա բանաստեղծի նկատմամբ ունեցած հավատից։ «Պոեզոզուռնայի»-, «Ռոմանս անսերի» մասին Սուրխաթյանի խոսքը բացարձակ դատապարտում, պարսավանք չէ։ Նա աշխատում է վերլուծել գրական այդ երևույթները, վեր հանել դրանց երևան գալու պատճառները, օգնել բանաստեղծին հետևողականորեն շարունակելու դարաշրջանի գեղարվեստական արտացոլումը։

Սուրխաթյանին հուզող գլխավոր հարցը գրականության բախտն էր սոցիալիստական հեղափոխությամբ վերակառուցվող աշխարհում։ Ինչպես տվյալ ժողովածուի, այնպես էլ նրանում տեղ չգտած բոլոր հոդվածները, ելույթները այս խնդրի տարբեր կողմերի ուսումնասիրությունն են։

«Գրականության հարցեր» ժողովածուն միայն սկիզբն է։ Անհրաժեշտ է զբաղվել Սուրխաթյանին ավելի լրիվ ներկայացնելու հարցով։ Չի կարելի մոռանալ, որ անցյալի, հատկապես մոտավոր անցյալի, գրական փորձի ուսումնասիրությունը լոկ պատմագրական նշանակություն չունի. այն օգնում է մեզ ճիշտ ապրել և ճիշտ գործել այսօր։

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ